համընդհանուր ճանաչում գտնում Կիլիկիայում, տարածվում ամբողջ Հայաստանում, իսկ հետո՝ նրա սահմաններից դուրս, հայ գաղութներում։

Իջևանի շրջանային սովետի գործկոմի նախագահ Ի. Էլլարյանի զեկուցման թեման էր «Նոր Գետիկի վանքը և Մխիթար Գոշը»։ Զեկուցողը պատմական տեղեկություններ տվեց Նոր Գետիկի, ինչպես նաև շրջակա մյուս հուշարձանների մասին, նշեց, որ Նոր Գետիկի վանքը հայ միջնադարյան ճարտարապետության հոյակապ կոթողներից է, նա եղել է ժամանակի գիտական և ուսումնական խոշորագույն կենտրոններից մեկը, այդ վանքի հիմնադրումն ու որպես մշակութային օջախի բարձրացումը կապված է Մխիթար Գոշի անվան հետ։ Զեկուցողը ցանկություն հայտնեց Նոր Գետիկի վանքը վերածել թանգարանի և նրա առաջ դնել Մխիթար Գոշի արձանը։ Նա առաջարկեց Գոշի հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան անցկացնել նաև Իջևանում, տեղի աշխատավորության ներկայացուցիչների մասնակցությամբ դարձնելով նստաշրջանի աշխատանքներին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Էմ. Պիվազյանը զեկուցեց Գոշի առակների մասին։ Հնում,—ասում է զեկուցողը,—գեղարվեստական գրականությունը, հատկապես արձակը, ինքնուրույն բնագավառ չէր, այլ համարվում էր պատմագրությունը։ Գոշի առակների ժողովածուն այդ տեսակետից առաջին արձակ գեղարվեստական երկն է, իսկ նրա հեղինակը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ։ Առակներում արտացոլված է ժամանակի հասարակության պատկերն իր բազմազան գծերով, այլաբանորեն ներկայացված են հասարակական տարբեր խավերի, դասերի ու դասակարգերի ներկայացուցիչներն իրենց փոխհարաբերությունների մեջ, շոշափված են սոցիալական խնդիրներ։ Գոշը ծաղրում է աշխատավորների ունեցվածքը հափշտակող իշխաններին, չար առաջնորդներին, ագահ ու կաշառակեր հոգևորականներին։ Գոշն աշխատավորության գաղափարախոսը չէ, բայց համակրում է այդ դասին, ջանում է հաշտեցնել «Տնազանդ յալներին» ու տերերին, հոգևոր և աշխարհիկ իշխաններին՝ ազգային ուժերը համախմբելու և օտարերի թշնամու դեմ ուղղելու նպատակով։ Նրա առակների մեծ մասի սյուժեն ինքնուրույն է, մյուսների համար աղբյուրներ են եղել Ս. գիրքը, «Բարոյախոս»-ը և ժողովրդական առակները։ Մեծ մասամբ առակների նյութը քաղված է կենդանիների, սակայն գերիշխում՝ բույսերի ու մարդկանց կյանքից։ Այնուհետև զեկուցողն առակները բաժանում է երեք հիմնական բաժինների և տալիս դրանցից յուրաքանչյուրի գիտական վերլուծությունը։

Մատենադարանի գիտաշխատող Խ. Թորոսյանի թեման էր «Մարդու և անձի պրոբլեմը Մխիթար Գոշի Դատաստանագրքում»։ Զեկուցողը նշում է, որ Գոշը իրավական նորմերի սոսկ հավաքող ու գրանցող չէ, այլ իր վերաբերմունքն է հանդես բերում այդ նորմերի նկատմամբ։ Դատաստանագրքում առկա է ոչ միայն Գոշ-իրավաբանը, այլև Գոշ-մտածողն ու մեծ մարդասերը։ Եթե նախորդ դարերում, աշխարհի տարբեր ժողովուրդների հին դատաստանագրքերում իրար դեմ կանգնած են մարդն ու անձը՝ որպես տարբեր և հակադիր հասկացություններ, ապա այդպես չէ Գոշի դատաստանագրքում։ Այստեղ «մարդ» և «անձ» հասկացությունները հակադիր չեն, այլ համապատասխանում են։ Դատաստանագրքի նորմերը ձևակերպված են հստակ, նրանցից շատերի մեջ առկա է արդարահունչը։ Հանցանքը բոլոր դեպքերում պետք է պատժվի, անկախ այն բանից, թե ով է հանցանք կատարողը։ Չնայած Գոշը հեռու չէ մարդկանց միջև ինչպես դասակարգային, այնպես էլ ազգային ու կրոնական խտրականության տեսակետից, սակայն կարևորն այն է, որ Գոշի մոտ գոյություն ունի մարդը, որը և անձ է։ Դրանով էլ, առաջին հերթին, Գոշը միջնադարում վեր է բարձրանում ոչ միայն որպես մեծ իրավագետ, այլև որպես մեծ մտածող ու մարդասեր։

Հ. ԱՄԱՅԱՆ

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ

Սույն թվականի ապրիլի 3-ին Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, նվիրված համալսարանի ՍՍՌՄ պատմության ամբիոնի վարիչ, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Հարությունի Ռշտունու ծննդյան 70-ամյակին և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակին։

Հանդիսավոր նիստը բաց արեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր, բիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Բատիկյանը։ Նրա ներածական խոսքից հետո հոբելյարի գործունեության մասին զեկուցեց դոցենտ Ռ. Մովսիսյանը։

Պրոֆ. Վ. Հ. Ռշտունին, ասաց զեկուցողը, իր բեղմնավոր կյանքի 50 տարին նվիրել է հայ երիտասարդության կրթության և պատմագիտության զարգացման գործին։ Ավարտելով էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Ռշտունին 1915 թ.

անցնում է ուսուցչական աշխատանքի։ Նա սկզբում դասավանդում է Թավրիզի, իսկ այնուհետև՝ Ախալցխայի ու Սուխումիի հայկական դպրոցներում։ 1919—1924 թթ. սովորում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների ֆակուլտետում և 1924 թ., հաջողությամբ ավարտելով այն, մեկնում է Երևան ու անցնում դասախոսական աշխատանքի։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն պատմում է պրոֆ. Ռշտունու դասախոսական գործունեության մասին։ Հոբելյարը տակավին 20—30-ական թվականներին մեծ աշխատանք է կատարում ուսանողների դաստիարակության գործում։ Նա թարգմանում է Վ. Ի. Լենինի մի շարք աշխատությունները և դարձնում դրանք մատչելի հայ ընթերցողի համար, առաջինն է ձեռնարկում «ՍՍՌՄ պատմություն» առարկայի մշակումը Հայաստանում, հիմնադրում է այդ պատմության ամբիոնը և անփոփոխ ղեկավարում այն մինչև այսօր։ Նրա բազմաթիվ սաները հաջողությամբ աշխատում են գիտության ու ժողովրդական կրթության տարբեր բնագավառներում։

Ռ. Մովսիսյանն այնուհետև խոսում է պրոֆ. Ռշտունու գիտական գործունեության մասին։ Նա նշում է, որ գիտնականի գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ, որոնցից հատկապես նշանավոր են՝ «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.», «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» (մաս Ա) և այլն։ Այդ աշխատություններում հեղինակը հանգամանորեն լուսաբանել է Հայաստանի՝ Ռուսաստանի միացման առաջադիմական խոշոր նշանակությունը, Հայաստանի ագրարային հարաբերություններն ու տնտեսական զարգացումը XIX դարում, գյուղացիական ռեֆորմի նախապատրաստումը, անցկացումն ու հետևանքները, կապիտալիստական հարաբերությունների զարգացման նախադրյալները, հայ հասարակական տարբեր հոսանքների վերաբերմունքը դեպի հողային հարցն ու Հայաստանի տնտեսական զարգացումը և այլն։ Բացի մենագրություններից, նա հրատարակել է նաև արխիվային նյութերի ժողովածուներ՝ նվիրված գյուղացիական շարժումներին Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբին, այդ ժողովածուների առաջաբաններում համառոտակի բնութագրելով Հայաստանի գյուղի դասակարգային պայքարի ընթացքը, որն ուղղված է եղել ցարիզմի գաղութային, տեղական կալվածատերերի ու կուլակների ճնշումների դեմ։ Նրա աշխատությունները կարևոր ներդրում են ոչ միայն հայագիտության, այլև կովկասագիտության մեջ։

Զեկուցողը բարձր է գնահատում հոբելյարին որպես քաղաքացու, մանկավարժի ու գիտնականի։ Հաշվի առնելով այդ արժանիքները, Սովետական կառավարությունը պարգևատրել է նրան Լենինի շքանշանով, մեդալներով ու շնորհել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը։ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետը Վ. Հ. Ռշտունուն՝ նրա ծննդյան 70-ամյակի ու գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակի կապակցությամբ, պարգևատրել է նաև պատվոգրով։

Զեկուցումից հետո հոբելյարին ողջունեցին ու շնորհավորեցին Հայկական ՍՍՌ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահ Ռ. Հայրյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Ներսիսյանը, ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր Ծ. Աղայանը, Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Կ. Խաչատրյանը, գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դի-

ռեկտոր Ռ. Գալոյանը, Հայկական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Վ. Համազասպյանը, Ռուսական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Հ. Հակոբյանը, Հայկական ՍՍՌ արխիվային վարչության պետ Ա. Հարությունյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանը և Ս. Երեմյանը, Հորելյարի մանկության ընկեր բանաստեղծ Գ. Գրիգը, Էջմիածնի միջնակարգ դպրոցի ուսմասվար Կ. Նազարյանը և ուրիշներ։

Այնուհետև հրապարակվեցին բազմաթիվ հեռագրեր, որոնցով ողջունում ու շնորհավորում էին Վ. Հ. Ռչտունուն նաև Հայկական ՍՍՌ Ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Ե. Քոչինյանը, եղբայրական Վրաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր ակադեմիկոս Բերձենիշվիլին, Ադրբեջանի պետական համալսարանի ՍՍՌՄ պատմության ամբիոնի դասախոսները, Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական աշխատողները, Սուխումի հայկական միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու նրանց սաները և շատ ուրիշներ։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Հորելյարը։

Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը սույն թվականի ապրիլի 24-ին միացյալ նիստում հանդիսավոր պայմաններում նշեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Գուրգեն Գրիգորի Սևակի (Գրիգորյան) ծննդյան վաթսունամյա և գիտական-մանկավարժական գործունեության երեսունհինգամյա հորելյանը։

Գուրգեն Սևակը ծնվել է 1904 թ. ապրիլի 28-ին Թբիլիսիում, կոշկակարի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում։ 1924 թ. Գ. Սևակը ընդունվում է Երևանի պետական համալսարանը, որն ավարտում է 1928 թ.։ 1929 թ. ընդունվում է ասպիրանտուրա, նույն թվականին էլ սկսում է դասախոսել համալսարանում, 1937 թ. ՀՍՍՌ լուսժողկոմատը նրան շնորհում է գոցենտի կոչում։ 1932—1939 թթ. նա գեկավարել է Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայոց լեզվի սեկցիան։ 1940 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1948 թ.՝ դոկտորի աստիճան։ 1941 թ. մինչև այսօր պրոֆ. Սևակը գեկավարում է համալսարանի հայոց լեզվի ամբիոնը։ Երկար տարիներ պրոֆ. Սևակը միաժամանակ գլխավորել է ակադեմիայի ժամանակակից հայոց լեզվի սեկտորի աշխատանքները, դասախոսություններ է կարդացել Լենինականի, Բաքվի, Թբիլիսիի բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Բեղուն է եղել պրոֆ. Սևակի գրիչը և հարուստ՝ նրա գիտակցական կյանքի անցած ուղին։ Հանրահռչակ են նրա շատ արժեքավոր ուսումնասիրությունները հայոց լեզվի տեսության, պատմության, ոճագիտության, լեզվաշինարարության մասին։ Նա առաջին լեզվա-

բաններից մեկն է Հայաստանում, որ մարքսիստական սկզբունքներով է քննում լեզվի և մտածողության, լեզվի և հասարակության փոխհարաբերության, լեզվի զարգացման հարցերը։ Նրա «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» (1932), «Լենինն ու դիալեկտիկական որիենտացիաները լեզվի մեջ» (1934), «Խոսքի մասերի ուսմունքը» (1939) ծավալուն ու մեծարժեք հոդվածները հայ մարքսիստական լեզվաբանության լավագույն գործերից են։ Նրա «Ժամանակակից հայոց լեզվի տե-